

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	2-59.11.02 «Լուսային ռեժիսուրա » մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի 2- 59.11.02.01-4 «լուսային ռեժիսոր» որակավորման
I. Դերը՝	Լուսային ռեժիսորը կատարում է նախագծերի (թատրոն, կինո, հեռուստատեսություն, շքահանդեսներ, համերգներ) լուսային ձևավորումներ, ապահովում է լուսային տեխնիկայի միջոցների անխափան և անվտանգ աշխատանքը և պահպանումը, մասնակցում է ստեղծագործական նախագծի իրականացմանը, ճարտարապետական նախագծերի լուսավորման աշխատանքներին: Կազմակերպում և ուղղորդում է լուսային աշխատանքներ կատարող տեխնիկական խմբի աշխատակիցների որակյալ և անվտանգ աշխատանքը, ինչպես նաև ապահովում է առանձին խմբերի (նախագծում ներառվածներ և հանդիսատես) անվտանգության պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները:
II Խնդիրների բնագավառ 1 Նախագծի նախապատրաստական աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	-ծանոթանում է սցենարին, -մասնակցում է քննարկմանը ստեղծագործական խմբի հետ՝ օպերատոր, նկարիչ, ռեժիսոր: -ուսումնասիրում է տարածքը, -որոշում, հաշվարկում և հայտագրում է լուսատեխնիկական անհժեշտ միջոցները՝ գունավոր և անգույն զտիչները և լրացուցիչ էֆեկտների համար անհրաժեշտ սարքեր: -հայտագրում է լուսային տեխնիկայի տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտը, -կատարում է լուսա-տեխնիկական միջոցների մոնտաժ, - հավաքում է լուսային ծրագիրը
Կատարման չափանիշներ	-ստեղծագործական խմբի հետ նախապատրաստական աշխատանքները կատարված են: - լուսատեխնիկական անհարժեշտ միջոցները ընտրված

	<p>հաշվարկված և հայտագրված են ճիշտ:</p> <ul style="list-style-type: none"> -տեխնիկական միջոցների նախնական մակետը ստեղծված է: - լուսային տեխնիկայի տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտը հայտագրված է ճիշտ, -լուսա-տեխնիկական միջոցների մոնտաժը կատարված է ճիշտ, -լուսային ծրագիրը հավաքված է ճիշտ:
<p><u>Խնդիրների բնագավառ 2 Կատարել աշխատանքային տարածքի լուսային մոնտաժ</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - ըստ տարածքի տեղադրում է լուսային միջոցները, էֆեկտները, գունային և անգույն լուսային զտիչները, - չափում և կարգավորում է լույսի ինտենսիվությունը, - կարգավորում է լույսի աղբյուրների հավասարակշռությունը էքսպոնոմետրով - լուսարձակները ուղղորդում է ըստ անհարժեշտության
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> -լուսային միջոցներն ըստ տարածքի ճիշտ են տեղադրված, -լուսային էֆեկտները ճիշտ են կատարված, -գունային և անգույն լուսային զտիչները տեղադրված են ճիշտ - լույսի ինտենսիվությունը չափված է և կարգավորված, - լույսի աղբյուրների հավասարակշռությունը կարգավորված է ճիշտ, -լուսարձակները ուղղորդված են ըստ անհարժեշտության
<p><u>Խնդիրների բնագավառ 3 Նախագծի լուսատեխնիկական աշխատանքների փորձարկում</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - ըստ լուսային պարտիտուրայի ռեժիսորի, օպերատորի և նկարիչի հետ փորձարկում է լուսային սարքերի հնարավոր տեսակները, լուսարձակները՝ ըստ բարձրության, խորության, տարածության, կախված մասնակիցների քանակից, դիրքից, միզանսցենից, գործողություններից, - աշխատում է երաժշտական ձևավորողի և դերասանական կազմի հետ, - գտնում է ամենաարդյունավետ լուծումները, - փորձարկում է լուսային ծրագիրը, շարժական լուսարձակը, լուսային վահանակի աշխատանքը,
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> -լուսային սարքերն ըստ լուսային պարտիտուրայի աշխատում են ճիշտ, - տարածության մեջ լուսավորության հետ կապված

	<p>խնդիրները լուծված են,</p> <ul style="list-style-type: none"> - մասնակիցների քանակից, դիրքից, միզանսցենից, գործողություններից կախված լուսավորությունն աշխատում է ճիշտ, -ռեժիսորի, օպերատորի և նկարիչի հետ բոլոր աշխատանքները համաձայնեցված են, - երաժշտական ձևվորողի և դերասանական կազմի հետ աշխատանքները համաձայնեցված են, - աշխատանքների սահուն ընթացքն ապահովված է, - իրեն տրամադրված միջոցներով գտնում է ամենարդյունավետ լուծումները - լուսային և գեղարվեստական ձևավորումները համադրված են ճիշտ, - լուսարձակներով աշխատում է ճիշտ, - լուսային ծրագիրը աշխատում է ճիշտ, - շարժական լուսարձակը աշխատում է ճիշտ - լուսային վահանակի աշխատանքը կարգավորված է -- էքսպոնումետրով աշխատում է ճիշտ - լուսային տարբեր տեխնիկական միջոցների հաջորդական աշխատանքը կախված տեսարանների փոփոխությունից կարգավորված է <p>Պահպանված են անվտանգության կանոնները:</p>
--	---

Խնդիրների բնագավառ 3. Նախագծի իրականացում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> -նախագծի իրականացման ժամանակ պահպանում է լուսարձակների միացման հաջորդականությունը, -փոխում է լուսային տեխնիկայի միջոցները տեսարանների փոփոխմանը զուգահեռ, -աշխատում է լուսային վահանակի մոտ - ստանում է լրացուցիչ էֆեկտներ/ կրակ, ծուխ և այլն./, կիրառում է համապատասխան լուսարձակներ, -առարական լուսավորում է տարբեր մասշտաբներով, -օրվա տարբեր ժամերին, լուսային տեխնիկայի միջոցներով ստանում է նույն էֆեկտը, լուսային տեխնիկայի միջոցներով ստանում է օրվա տարբեր ժամերի /ռեժիմ/ էֆեկտ:
---------------------------------------	--

	-օգտագործում է բնական լույսի աղբյուրները
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> -լուսարձակների միացման հաջորդականությունը կատարում է ճիշտ -տեսարանների փոփոխմանը զուգահեռ լուսային տեխնիկայի միջոցները փոխում է ճիշտ, - վարժ աշխատում է լուսային վահանակի մոտ, - ստանում է լրացուցիչ էֆեկտներ/ կրակ, ծուխ և այլն../ - համապատասխան լուսարձակները կիրառում է ճիշտ, - առարական տարբեր մասշտաբներով լուսավորում է ճիշտ, - իրեն տրամադրված միջոցներով գտնում է ամենարդյունավետ լուծումները - օրվա տարբեր ժամերին, լուսային տեխնիկայի միջոցներով ստանում է նույն էֆեկտը, - լուսային տեխնիկայի միջոցներով ստանում է օրվա տարբեր ժամերի / ռեժիմ/ էֆեկտ, - շարժական լուսարձակով աշխատում է ճիշտ, - բնական լույսի աղբյուրները օգտագործում է, -աշխատանքները կատարել է անխափան, լուսային տեխնիկայի տարբեր միջոցներով: Պահպանված են անվտանգության կանոնները
Խնդիրների բնագավառ 4. Անվտանգության կանոնների ապահովում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> -անկանխատեսելի իրավիճակներում՝ հոսանքի տատանում, անջատում, լուսարձակի կամ տեխնիկական այլ սարքի խափանում, գտնում է լուծումներ, վերացնում է անսարքությունները, - ուղղորդում և վերահսկում է սարքերի ապահով և անխափան տեղափոխությունը, -օգտագործում է համապատասխան մալուխներ /կաբել/ ելնելով անվտանգության կանոններից, -ապահովում է սարքերի վերանորոգումը, -ապահովում է անվտանգության կանոնների պահպանումը՝ լուսարձակներ, լամպեր, մալուխ և այլն: -իրականացնում է անվտանգության համակարգը ապահովող աշխատանքներ՝ անկախ շահագործման պահից:

	<p>-անվտանգության կանոններից ելնելով, հաշվարկում է էլեկտրական սարքերի հնարավորությունները և անհրաժեշտությունը:</p> <p>-հետևում է լուսային տեխնիկայի ապահով տեղափոխման աշխատանքներին</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> -- անկանխատեսելի իրավիճակներում՝ հոսանքի տատանում, անջատում, լուսարձակի կամ տեխնիկական այլ սարքի խափանում, կողմնորոշվում է ճիշտ և օպերատիվ, - Նախագծի իրականացման ժամանակ ուղղորդում է իր ենթակաների անվտանգ աշխատանքը, - վերահսկում է սարքերի ապահով և անխափան տեղափոխությունը, - օգտագործում է համապատասխան մալուխներ /կաբել/ ելնելով անվտանգության կանոններից, - ապահովում է սարքերի վերանորոգումը, -հետևում է լուսային տեխնիկայի միջոցների անխափան աշխատանքին -ապահովում է անվտանգության կանոնների պահպանումը նախագծի իրականացման ժամանակ՝ լուսարձակներ, լամպեր, մալուխ և այլն -իրականացնում է անվտանգության համակարգը ապահովող աշխատանքներ՝ անկախ շահագործման պահից - վերահսկում է տեխնիկական միջոցներից անձնակազմի և հանդիսատեսի անվտանգությունը - անվտանգության կանոններից ելնելով, հաշվարկում է էլեկտրական սարքերի հնարավորությունները և անհրաժեշտությունը - հետևում է լուսային տեխնիկայի ապահով տեղափոխման աշխատանքներին
<p><u>Խնդիրների բնագավառ 5. Աշխատանքի ավարտ</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Նախագծի ավարտից հետո անջատում է բոլոր սարքերը ճիշտ հաջորդականությամբ, պահպանելով սարքերի անջատման հաջորդականության անվտանգությունը,</p> <ul style="list-style-type: none"> - անհրաժեշտության դեպքում հանում է լուսարձակի լամպերը, լուսարձակների լամպերը տեղադրում է համապա-

	<p>տասխան արկղերում, հավաքում է լարերը, լուսային տեխնիկան:</p> <ul style="list-style-type: none"> - ապահովում է սարքերի և սարքավորումների ապամոնտաժումը - հետևում է լուսային տեխնիկայի տեղափոխման աշխատանքներին:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - բոլոր սարքերը անջատում է ճիշտ հաջորդականությամբ, - լուսարձակի լամպերը հանում է ճիշտ, - լուսարձակների լամպերը համապատասխան արկղերում տեղադրում է ճիշտ - սարքը ու սարքավորումները հավաքում է ճիշտ, <p>Ապահովված են լուսարձակների և լուսային տեխնիկայի այլ միջոցների անջատման, հավաքման և տեղափոխման աշխատանքները:</p>
III. Պատասխանատվությունը	<p>Պատասխանատու է նախագծերի իրականացման համար լուսային համապատասխան ձևավորման, լուսային տեխնիկայի միջոցների անխափան և հաջորդական աշխատանքի, լուսատեխնիկական միջոցներից օգտվելու անվտագության կանոնների պահպանման, ինչպես նաև լուսարձակների և լուսատեխնիկական այլ միջոցների անջատման և ապահով տեղափոխման համար:</p> <p>Պատասխանատու է համագործակցության և աշխատանքային նորմալ պայմանների ու մթնոլորտի ապահովման, աշխատանքին թիմային մոտեցում ցուցաբերելու հարցերում:</p>
IV. Լեզուները	<p>Հայերեն՝ գերազանց</p> <p>Առնվազն երկու օտար լեզու՝ ռուսերեն և անգլերեն՝ լավ</p>
V. Համակարգիչը	<p>Microsoft Word - լավ</p> <p>Internet Explorer –լավ</p> <p>Կարողանալ օգտվել մասնագիտական գործունեության համար նախատեսված համակարգչային ծրագրերից</p>
VI. Գիտելիքները	<p>Արվեստի պատմության, կերպարվեստի, ֆիզիկայի՝ էլեկտրականություն, օպտիկա, էլեկտրատեխնիկա, լուսարձակների տեսակների, կառուցվածքի, շահագործման, մաթեմատիկայի, կինոյի և թատրոնի պատմության իմացություն:</p>

<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Աշխատանք լուսային վահանակով, լուսային տեխնիկական միջոցներով:</p> <p>Իրեն տրամադրված միջոցներով ամենաարդյունավետ լուծումները գտնելու կարողություն:</p> <p>Օգտագործելով տրամաբանությունը և բանականությունը՝ խնդիրների այլընտրանքային լուծումների, բխող հետևությունների կամ մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը տարբերակելու կարողություն:</p> <p>Սովորելու և սովորեցնելու կարողություն:</p> <p>Սեփական ժամանակը կառավարելու կարողություն:</p> <p>Տրամադրված ժամանակը ճշգրտորեն կառավարելու կարողություն:</p> <p>Իր և մյուսների գործողությունները՝ բարելավումներ կամ ուղղիչ գործողություններ ձեռնարկելու համար, վերահսկելու և գնահատելու կարողություն:</p> <p>Արդյունավետ կերպով օտար լեզվով՝ գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողություն:</p> <p>Որպես տեխնիկական խմբի ղեկավար, աշխատակիցներին դեպի աշխատանք ուղղորդելու, նրանց կատարելագործու և ուղղություն տալու կարողություն:</p> <p>Հաճախ կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու հմտություններ:</p> <p>Մարդկանց ընկալելու ունակություն:</p>
<p>VIII. Վերաբերմունքը</p>	<p>Մտածող, պարկեշտ, անկաշկանդ, պարտաճանաչ, պատասխանատու, պահանջկոտ, կարգապահ, հաղորդակցվող, մաքրասեր, տեղեկացված, համեստ, հարգալից, նորարար, ընկերասեր:</p>